հրաման), որը կապացուցեր Բ. Սեդրակյանի «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի ժ/պ հանդիսանալու փաստը և համապատասխանաբար, վիճարկվող որոշումը ստորագրելու իրավասություն ունենալու փաստը, արձանագրում է, որ պատասխանողի կողմից ներկայացվել է ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի քաղվածք, համաձայն որի Բաբկեն Սեդովի Սեդրակյանը հանդիսանում է «Կարեն Դեմիրճյանի անվան մետրոպոլիտեն» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, հետևաբար հայցվորի դիրքորոշումները այս մասով անհիմն են:

Հետևաբար Դատարանը գտնում է, որ պատասխանողի կողմից չի ապացուցվել վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերը, ուստի հայցը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

6. Դատական ծախսեր և հայցի ապահովման միջոցի հարց.

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին՝ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Նկատի ունենալով, որ հայցվորը հայցադիմումը դատարան ներկայացնելու համար վճարել է պետական տուրքի գումարը, իսկ հայցը ենթակա է մասնակի բավարարման, սակայն հայցվորը նշված նորմի ուժով պահանջ չի ներկայացրել պատասխանողից հօգուտ իրեն բռնագանձել նախապես վճարված պետական տուրքի գումարը, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. Կայուն Զարգացման Ներդրումային հիմնադրամ ՀՄԴ-ի հայցն ընդդեմ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲ ընկերության՝ «Կայուն Զարգացման Ներդրումային Հիմնադրամ»-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի ժ/պ Բ. Սեդրակյանի 16.10.2025 թվականին կայացրած թիվ 19-5 որոշումը անվավեր ճանաչելու

պահանջի մասին, բավարարել.

1.1 «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի ժ/պ Բ. Սեդրակյանի 16.10.2025 թվականի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 19-5 որոշում ճանաչել անվավեր:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռը կամովին չկատարելու դեպքում, այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Աննա Ճիլաջյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IEC4-9C8E-496A-A1EC հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am